ԱԹԱՆԱՍ ՎՐԴ., Մր. — Կը վախճանի ի Կ. Պոլիս 1769ին։

ԱԹԱՆԱՍ ՎՐԴ. ԳԱՍԱՊԱՑԻ, Մր. — 1866ին ՏԼ.։

ԱԹԱՆԱՍ ՎՐԴ., Մր.—ԼՄՑ. կը վախճանի 1748ին։ Հաւանաբար այս անձին ծախքովը ընդօրինակած է Գրիգոր դպիր Կեսարացի Անտոն Կոռտացոյն մտածմանց եւ Անապատիա գիրքը, 1740ին, ի Կ. Պոլիս (Յիշատակարան ՄՁ. Թ. 117։

ԱԹԱՆԱՍ ԾԱՅՐԵՑԻ (Արձախ). — Իր եղբօրը Բասիլի հետ ուխտաւորութեամբ կ'այցելէ Ս. Եէմ, 1696ին։ Ճառընտիր մը ունի հետեւեալ յիշատակարանը. «ի Թուահաշուոց հայկականի, հազարերորդ հարիւրակի. քառ տասն և թէ հնգեակէ աւելի. (=1696) զոր Աթանաս իմ Ծայրեցի հանդերձ եղբաւրն իմ Բասիլի. եկաք ի քաղաքս Կոստանդնի՝ որ է մայրաց մայր քաղաքի՝ նախ և յառաջ է Բիւզանդի. կայսերական նախագահի։... Հոկտեմբերի մուտն ծրի, ի գրան տիրամօր Սուրբ Աստուածածնի՝ ի Սուրբ Երուսաղեմայ ճանապարհի որ և պաղօթս յիշողաց մեզ պաշար լիցի երկնաձիգ ռահի ամէնն։ Այս ճառընտիր գրչութեան տեղն անյայտ է, հաւանաբար Երուսաղէմի Ս. Յակոբայ Վանքը ըլլայ. առաջին ստացողն է Պօղոս երէց և գրիչն է Կիւրեղ կրօնաւոր. Թերեւս ԺԳ. դարուն ընդօրինակուած։ Իսկ Աթանաս Ծայրեցին՝ նոյն ճառընտիրին հանդիպած ըլլալով՝ գրած է անոր մէջ վերոգրեալ յիշատակագրութիւնը։ (Տե՛ս, Երգս. Ցուց. Բ. Թ. 985. էջ, 132-34, նաեւ Սիոն, 1927, էջ 178-82 մեր յօդուածը)։ ՄՁ. Թ. 390 ձեռագիրը ունի յիշատակագրութիւն մը Աթանաս Ծայրեցւոյ և իր եղբօրը Բասիլի համար, վերջինս՝ այս յիշատակագրութեան մէջ նշանակուած է Բարսեղ Վարդապետ. «Նուաստ պարտաւոր բանասիրի Աթանասի Ծայրեցւոյ սկսեալ մատենիս Սրբոյն Գրիգորի Նիւսացւոյ ընթերցեալ յանկ ածի ՌՃԽԶ (=1697)ի թուին, յորժամ ես և իմ եղբայր Բարսեղ վարդապետ Ս. Երուսաղէմ եկաք։» (Խաչ. Ցուց. տետր Թ. էջ 947)։

ԱԹԱՆԱՍ ՔՀ. — Դիզափայտի վկաներէն մին է այս քահանան, որ Ս. Մեսրոպի աշակերտն ըլլալով Երուսաղէմ եկած էր ուխտի. վերադարձին կը նահատակուի Արցախի Խաչէն գաւառի մէջ, ինչպէս կը յիշատակէ Հայոց Յայսմաւուրքը։

ԱԼԻՔՍԻԱՆՈՍ ՎՐԴ. ՍՄԱՍԻԱՑԻ, Մր. — Ձռ. 1801ին. Նւ. Թիֆլիզի (※ 1813)։